


Նախնական հաստատված է

Հաստատվել է

«ԷԷՀՕ» ՓԲ ընկերության խորհրդի
2025թ. մայիսի 23-ի նիստում
խորհրդի նախագահ

ՀՀ Տարածքային կառավարման և
նրբակառուցվածքների նախարար

 **Ա.ԽԱԶԱՏՐՅԱՆ**

 **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**
2025թ.

**«Էլեկտրաէներգետիկական համակարգի
օպերատոր» ՓԲ ընկերության**

**2024 ԹՎԱԿԱՆԻ
ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- I. Տեղեկատվություն Ընկերության, նրա կառավարման մարմինների մասին***
- II. Արտադրական գործունեություն***
- III. Ֆինանսատնտեսական գործունեություն***
- IV. Աշխատանք և աշխատավարձ***
- V. Եզրափակիչ դրույթներ***
- VI. Հաշվապահական հաշվեկշիռներ***
- VII. Տեղեկանքներ***
- VIII. Հաշվարկներ***
- IX. Տեղեկություններ խորհրդի անդամների մասին***

I. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

<i>անվանումը՝ հայերեն լրիվ</i>	-	«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերություն
<i>կրճապ</i>	-	«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ
<i>ռուսերեն</i>	-	Закрытое акционерное общество «Оператор электроэнергетической системы»
<i>կրճապ</i>	-	ЗАО «Оператор электроэнергетической системы»
<i>անգլերեն լրիվ</i>	-	«Electro power systems operator» Closed joint-stock company
<i>կրճապ</i>	-	«Electro power systems operator» CJSC
<i>հասցեն՝ հեռախոս՝ ֆաքս՝ էլ.փոստ՝ ինտերնետային կայք՝ հարկ վճարողի հաշվառման համարը</i>	-	ՀՀ, 0009, Երևան, Արմավյան փողոց 27 (+37410) 524725 (+37410) 547317 office@energyoperator.am www.energyoperator.am 01547732
<i>«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերության բանկային վավերապայմանները՝</i>		
«Արդշինբանկ» ՓԲԸ		
«Ադասյան» մասնաճյուղ		2474600497000000
«Արաբկիր» մասնաճյուղ		2471200469060000

Պեդ.ռեգիստրում գրանցման համարը և ամսաթիվը՝
27312003639, 05.11.2003թ., վկայական թիվ 03 Ա 062403

Իրավակազմակերպական ձևը՝
Փակ բաժնետիրական ընկերություն

Ընկերության կորպորատիվ կառուցվածքը

ա) Բաժնետերերի ընդհանուր ժողով

բ) Խորհուրդ

գ) Խորհրդի հանձնաժողովներ (2024թ. ընթացքում չեն ստեղծվել)

դ) գործադիր մարմին:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 3450241482.4647 դրամ, որը կազմում է 316349 հատ (հասարակ) սովորական, անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը՝ 10906.4403 դրամ:

Բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են, պատկանում են Հայաստանի Հանրապետությանը, վճարված են նրա կողմից և կառավարվում են Հայաստանի Հանրապետության կառավարության և նրա լիազորված անձի՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի կողմից:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՏՐՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՅՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ընկերության նպատակն է տնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը, որի համար իրավունք է տրված և պարտավորեցված էլեկտրաէներգետիկական համակարգում մատուցել էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայություն՝ հետևյալ գործառույթներով.

1. էլեկտրաէներգետիկական համակարգում կարճաժամկետ պլանավորում և կարգավարում.
2. էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատիվ կառավարում.
3. էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի զարգացման պլանավորում.
4. տարածաշրջանային էլեկտրաէներգետիկական համակարգերի հետ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի համատեղ աշխատանքի ապահովում.
5. էլեկտրաէներգետիկական համակարգում համաձայն Լիցենզիայի պայմանների և Շուկայի կանոնների, իր օպերատիվ ենթակայության ներքո գտնվող Ռելեական պաշտպանության և Հակավթարային ավտոմատիկայի սարքվածքների նախադրվածքների հաշվարկում, առաջադրում և դրանց կատարման վերահսկում.
6. հաճախականության և փոխհոսքերի կարգավորման, հաշվեկշռման, ինչպես նաև համակարգային ծառայություններ մատուցելու համար նախատեսված տեղակայանքների պատրաստականության ստուգում.
7. էլեկտրաէներգետիկական համակարգում կրիտիկական (վթարային) իրավիճակներում էլեկտրամատակարարման սահմանափակումների ծրագրերի կիրառման վերաբերյալ որոշումների կայացում.
8. հաղորդման ցանցին միացվող նոր կամ վերակառուցվող էներգատեղակայանքներ և սարքավորումների հաղորդման ցանցին

միացնելու տեխնիկական պայմանների և միացման գործողությունների ծրագրի վերաբերյալ համաձայնության տրամադրում.

9. էլեկտրական էներգիայի (հզորության) միջպետական առևտրի խթանման և տարանցման ապահովման նպատակով համագործակցություն այլ երկրների համապատասխան կազմակերպությունների հետ.

10. Շուկայի կանոններով նախատեսված այլ գործառույթներ:

Լիցենզիայի պայմանների 5-րդ կետի 1-7-րդ ենթակետերով ամրագրված գործառույթները Լիցենզավորված անձն իրականացնում է բացառիկ իրավունքով:

Ընկերությունը կարող է զբաղվել օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով, ինչպես նաև լիցենզիայի (հատուկ թույլտվություն) առկայության դեպքում այլ գործունեությամբ:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշմամբ, Ընկերությանը տրված լիցենզիայի գործունեության ժամկետը 2020 թվականին երկարաձգվել է մինչև 2025թ. դեկտեմբերի 9-ը:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

1. Բաժնետիրոջ ընդհանուր ժողով՝

Ընկերության կառավարման
բարձրագույն մարմին.

Դ.Խուղաթյան

-

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարար,
ընկերության բաժնետոմսերի
կառավարման 100%
լիազորությունները իրականացնող

Հաշվետու տարում՝ 2024թ. հունվարի 26-ին, հունվարի 30-ին, փետրվարի 5-ին, հունիսի 14-ին, հոկտեմբերի 22-ին և հոկտեմբերի 28-ին Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3 հասցեում տեղի է ունեցել Ընկերության արտահերթ ընդհանուր ժողովներ:

2. Խորհուրդ՝ Ընկերության կանոնադրության 13 հոդվածը (13.1-ից 13.7 կետեր)՝ սահմանում է Խորհրդի բացառիկ և պատվիրակված իրավասությունները:

Խորհրդի գործունեությունը

2024թ. ընթացքում Խորհուրդը գումարել է 3 խորհրդի նիստ՝ որոնք տեղի են ունեցել հունվարի 22-ին, մայիսի 24-ին և հոկտեմբերի 22-ին: Նիստերը անց են կացվել հեռակա քվեարկության միջոցով:

Գործադիր մարմին

Ընկերության գործադիր մարմինը բաղկացած է մեկ՝ գլխավոր տնօրենի պարտականությունները կատարողից՝ Դավիթ Արայիկի Գրիգորյան:

2024թ. Ընկերության ներքին աուդիտ իրականացնող անձ և կորպորատիվ քարտուղար չի նշանակվել:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003թ. մայիսի 2-ի «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» և «Էներգա-կարգաբերում» փակ բաժնետիրական ընկերություններ ստեղծելու մասին» N779-Ա որոշման 1 կետի ա) ենթակետի պահանջներին համապատասխան ստեղծվել է «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերություն:

Նույն որոշման 6-րդ կետի համաձայն «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերապահվել են հետևյալ պաշտոնատար անձանցից յուրաքանչյուրին քվեարկող բաժնետոմսերի ընդհանուր թվի 1/5 չափով.

Հայաստանի Հանրապետության վարչապետ

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար

ՀՀ էներգետիկայի նախարար

ՀՀ արդարադատության նախարար

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետ

«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերության հիմնադիր ժողովը տեղի է ունեցել 2003թ. հոկտեմբերի 30-ին, որի որոշման 1-կետով հաստատվել է «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերության ստեղծումը:

ՀՀ կառավարության 2003թ. նոյեմբերի 6-ի «ՀՀ էներգետիկայի ոլորտի պետական ընկերությունների 2003–2007 թվականների ֆինանսական առողջացման ծրագրի ու 2003–2007 թվականների ֆինանսական հոսքերի կանխատեսումների և մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N1694-Ն որոշման 2-րդ կետի պահանջներին համապատասխան Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող Ընկերության բաժնետոմսերի լիազորությունները վերապահվել է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարին:

Ընկերության կանոնադրությունը Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 2003թ. նոյեմբերի 5-ին:

ՀՀ բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովի 2003թ. դեկտեմբերի 9-ի «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերությանը էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման լիցենզիա տրամադրելու մասին» N87-Ա որոշման 1 կետով Ընկերությանը տրամադրվել է Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման լիցենզիա, որի պայմանները հաստատվել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017թ. մայիսի 17-ի N163Ա որոշմամբ:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ընկերությունը իր կառուցվածքում ունի «Էներգակապ» մասնաճյուղ և մինչև 2023թ. հոկտեմբերի 5-ը գործել է Արցախի հանրապետության «Գանձասար օպերատոր» ՓԲ ընկերությունը:

Ընկերության տնօրինության տակ են գտնվում ներքոհիշյալ վարչական և արտադրական տարածքները.

ՀՀ Կառավարության 2003թ. մայիսի 2-ի «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» և «Էներգակարգաբերում» փակ բաժնետիրական ընկերություններ ստեղծելու մասին N779-Ա որոշման հավելված 1-ով փոխանցվել է շենք շինություն («Էներգակապ» մասնաճյուղ), որոնք սեփականության իրավունքով՝ 2005թ. հոկտեմբերի 18-ին, 1092.3 քառ. մետր մակերեսով, գրանցված են ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 3-6 մատյանի 000295 համարի տակ, քաղ. Երևան, Արաբկիր համայնք, Մալխասյանց փող. թիվ 2 հասցեում, այդ թվում՝ վարչական շենք, պահեստներ, ավտոտնակներ, ծածկեր, բենզալցակայան: Կադաստրի պետական կոմիտեում 2006թ.-ից քաղ.Երևան, Մալխասյանց 2 հասցեի 0.265 հա հողամասի նկատմամբ սեփականության իրավունքով՝ ՀՀ կառավարության 01.10.05թ. N199-Ն որոշման և ՀՀ հողային օրենսգրքի 23 հոդվածի պահանջների համաձայն, փոխանցվել է «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերությանը:

2006թ. Ընկերության կողմից անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով զբաղեցրած հողամասի («Էներգակապ» մասնաճյուղ - 0.265 հա) նկատմամբ գրանցվել է սեփականության իրավունք, որը ակտիվների կազմում ներառելու և հաշվապահական ձևակերպումներ տալու վերաբերյալ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2/3 1-5/3-3058, 07.03.06թ. պարզաբանմամբ որպես հետաձգված եկամուտ Ընկերությունը ձևակերպել է 105.979 մլն դրամ: Նշված եկամուտը պետք է ճանաչվի որպես եկամուտ սիստեմատիկ և ռացիոնալ հիմունքով, տվյալ հողամասի վրա կառուցված շենքերի, շինությունների միջին կշռված մնացորդային օգտակար ծառայության ժամկետի ընթացքում և վերագրվի հաշվետու ժամանակաշրջանի եկամուտներին:

ՀՀ կառավարության 2009թ. օգոստոսի 13-ի «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերությանը գույք հանձնելու մասին» N924-Ա որոշմամբ «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացված՝ Երևան քաղաքի Աբովյան 27 հասցեում գտնվող՝ 3436.95 քառ. մետր մակերեսով ու 2327154 հազ.դրամ գնահատված արժեքով շենքը և դրա սպասարկման ու օգտագործման համար հատկացված 0.13639 հեկտար հողատարածքը ներդրվել է «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում: ՀՀ Կառավարության 2010թ. փետրվարի 18-ի N150-Ա որոշմամբ «3436.95 քառ. մետր մակերեսով» բառերը փոխարինվել են «3536.95 քառ. մետր մակերեսով» բառերով, իսկ «2327154» թիվը՝ «2343603»:

2010թ. ապրիլի 12-ին սեփականության իրավունքով՝ 3536.95 քառ. մետր մակերեսով շենքը և 0.13639 հեկտար հողատարածքը՝ գրանցված են ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 010063-21 մատյանի 00210 համարի տակ, քաղ. Երևան, Կենտրոն համայնք, Աբովյան փող. թիվ 27 հասցեում:

ՀՀ կառավարության 2017թ. դեկտեմբերի 7-ի «ՀՀ կառավարության 25.02.2010թ. N182-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու և «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերության կանոնադրական կապիտալում գույք ներդնելու մասին» N1557-Ա որոշման համաձայն, ք.Երևան, Ծովակալ Իսակովի 50/21 հասցեում 0.25555 հեկտար մակերեսով հողամասը 38700.0 հազ.դրամ շուկայական արժեքով ներ է դրվել «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերության կանոնադրական կապիտալում՝ Պահուստային կարգավարական կենտրոն կառուցելու նպատակով, որը համապատասխան գրանցում է ստացել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում, ինչպես նաև համապատասխան գրանցում է ստացել ՀՀ պետական ռեգիստրում:

«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերության խորհրդի 19.12.2019թ. նիստի «Արցախի Հանրապետությունում ընկերություն ստեղծելու վերաբերյալ» որոշման հիման վրա, 2021թ. հոկտեմբերի 10-ին խորհուրդը հաստատել է Արցախի Հանրապետությունում գործող «Գանձասար օպերատոր» ՓԲ ընկերության կանոնադրությունը, որը Արցախի Հանրապետության օրենքներին համապատասխան գրանցվել է ԱՀ պետական ռեգիստրում՝ որպես «Գանձասար օպերատոր» ՓԲ ընկերություն, ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից «Գանձասար օպերատոր» ՓԲ ընկերությանը տրվել է գործունեության լիցենզիա և սահմանվել է սակագին: «Գանձասար օպերատոր» ՓԲ ընկերությունը իր գործունեությունը սկսել է 2022թ. հունվարի 1-ից:

Խորհրդի 24.12.2021թ. նիստում հաստատված «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերության վարչակազմակերպական կառուցվածքում ընդգրկվել է Արցախի Հանրապետության «Գանձասար օպերատոր» ՓԲԸ-ն, որպես առանձին կառուցվածքային ստորաբաժանում:

Խորհրդի 2023թ. հոկտեմբերի 5-ի նիստում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արցախի Հանրապետության տարածքը Ադրբեջանի Հանրապետության կողմից օկուպացվելուց հետո Արցախի էլեկտրամատակարարումը 24.09.2023թ.-ից իրականացվում է Ադրբեջանի էներգահամակարգից, իսկ օպերատորի գործառույթները իրականացվում են Ադրբեջանի օպերատորի կողմից, որոշվել է «Գանձասար օպերատոր» ՓԲ ընկերությունը հանել «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերության հաշվեկշռից և կառուցվածքից:

II. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2024թ. ընթացքում Ընկերությունը, իրականացրել է օպերատորի ծառայության մատուցման լիցենզիայով նախատեսված բոլոր գործառույթները՝ ապահովելով ՀՀ էներգահամակարգի անվտանգությունն ու հուսալիությունը: Տարվա ընթացքում Կենտրոնական կարգավարական ծառայության աշխատակիցների մեղքով վթարներ չեն արձանագրվել:

Հանդիսանալով էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մասնակից, «ԷԷՀՕ» ՓԲ ընկերությունը իր փոխհարաբերությունները շուկայի այլ մասնակիցների հետ վարում է «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի և էլեկտրաէներգետիկական համակարգի լիցենզավորված այլ անձանց փոխհարաբերությունների կարգը հաստատելու մասին» ՀՀ ՀԾԿՀ 2008թ. հուլիսի 2-ի N347-Ն որոշմանը համապատասխան: «ԷԷՀՕ» ՓԲ ընկերությունը գործունեության ոլորտում կարևոր տեղ է հատկացված նաև ՀՀ ՀԾԿՀ «ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության ապահովման կանոններ» 2004թ. դեկտեմբերի 24-ի N176-Ն որոշմամբ սահմանված դրույթների իրագործմանը:

Ընկերությունը, լիցենզիայի պայմաններին համապատասխան, տարվա ընթացքում մշակել և արտադրող, բաշխող և տեղափոխող ընկերություններին է տրամադրել հրահանգներ:

Տեխնիկական բարձր մակարդակով և փոխադարձ վստահության մթնոլորտում է ապահովվում Իրանի Իսլամական Հանրապետության «Թավանիր» ընկերության ազգային կարգավարական կենտրոնի և Ընկերության կենտրոնական կարգավարական ծառայության կարգավարների միջև փոխհարաբերությունների և 220կՎ Ահար-1, Ահար-2 միջպետական էլեկտրահաղորդման գծերի օպերատիվ կառավարման վերաբերյալ կնքված համաձայնագրով նախատեսված պահանջների կատարումը: Ըստ անհրաժեշտության վերամշակվել են արդեն գործողության մեջ գտնվող հրահանգները և տրամադրվել համապատասխան ընկերություններին:

Ընկերությունը սպասարկել է կապուղիներ, մալուխային և օդային կապի գծեր, ռադիո և այլ հատուկ կապի ու հեռուստամեխանիկայի սարքավորումներ և SCADA/կապ համակարգը, որն իր մեջ ներառում է՝

ՍԿԱԴԱ/ԿԱՊ համակարգ

1. Հեռամեխանիկայի սարքեր (RTU)	- 28 հատ
2. ՍԿԱԴԱ/սերվերներ	- 6 հատ
3. Տեսապատ	- 2 հատ
4. Տեսապատի պրոյեկցիոն սարքեր	- 30 հատ
5. Ժամանակի սինխրոնիզացիոն սարք	- 4 կոմպ.
6. Երկարատև ձայնագրման սարք	- 3 հատ
7. IP հեռախոսային կայան -կապի սերվերներ	- 5 հատ
8. Ունիվերսալ չափիչ սարքեր (PM130EH)	- 477 հատ
9. Համակարգիչներ (ՍԿԱԴԱ/ԿԱՊ համակարգում)	- 37 հատ
10. Ցանցային ղեկավարման համակարգեր (NMS)	- 3 հատ
11. Օպտիկական վերջնամասային սարքեր (OLTE)	- 54 հատ
12. Բարձր հաճախականության Սարքավորումներ (DPLC)	- 21 լրակազմ - 21 կապուղի
13. ԱՀԿ Panasonic	- 11 հատ
14. Օպտիկամանրաթելքային ճոպան (OPGW)	- 1099.5 կմ
15. Օպտիկամանրաթելքային մալուխ (OPAC)	- 41.382 կմ
16. Օպտիկամանրաթելքային մալուխ (ADSS)	- 39.324 կմ
17. Մալուխային կապի պղնձյա գծեր	- 3.7 կմ - 18 կապուղի
18. Էներգասնուցման անխափան սարքեր՝ - լիցքավորման ագրեգատներ (Golero) - ակկումուլատորային մարտկոցներ - շարժիչ գեներատորներ EP 6000 220Վ/48Վ-լիցքավորիչներ 48Վ/220Վ –փոխակերպիչներ - Անխափան սնուցման սարք (UPS) 40 կՎա	- 16 հատ - 18 կոմպ. - 16 հատ - 16 հատ - 30 հատ - 5 հատ
19. Էլեկտրասնուցման պահուստային ավտոմատ միացման համակարգ	- 5 հատ
20. Դիզել գեներատոր 150 կՎա	- 2 հատ
21. Անալոգային հեռախոսային փոխակերպիչներ (Mediatrix)	- 42 հատ
22. ՍԿԱԴԱ համակարգի ցանցային (swich) կոմուտատորներ	- 50 հատ
23. ՍԿԱԴԱ/ԿԱՊ համակարգի IP հեռախոսներ	- 316 հատ
24. ՍԿԱԴԱ/ԿԱՊ համակարգի Անալոգային հեռախոսներ	- 86 հատ
25. Ռադիոկայան FM 301-160	- 12 հատ

- 12 կապուղի
26. Ռադիոռելեական սարքավորումներ <<Малютка>> - 6 հատ
- 12 կապուղի
27. Ռադիոսարքավորումներ air FIBER 5x - 10 կայան
- 8 կապուղի

Բացի վերոհիշյալ սարքավորումների և գծերի սպասարկումից, կատարվել են նաև հետևյալ արտապլանային և վթարավերականգնողական աշխատանքները.

Կենտրոնական ծառայություն (արտապլանային աշխատանքներ)

«Հրազդան 5»-ում SFP (OLTE) սարքավորման մոդուլի փոխարինում:

«Շահումյան -2», «ՀԱԷԿ» ՓԲԸ, «ԲԷՑ» ՓԲԸ SDH (OLTE) օղակի մակարդակների վերականգնում:

«ԵրՋԷԿ», «Արարատ-2» (OLTE) սարքավորումների մակարդակների վերականգնում:

«Սպանդարյան» ՀԷԿ, «Շինուհայր» Ե/Կ, «Շամբ» ՀԷԿ (OLTE) սարքավորումների մակարդակների վերականգնում, (SFP մոդուլի փոխարինում):

«Հաղթանակ» Ե/Կ (OLTE) սարքավորման SFP մոդուլի փոխարինում:

«Կամո» ու «Լիճք» Ե/Կ-ներում PLC-ի ETL սարքավորման կապի վերանորոգում:

«Լիճք» և «Եղեգնաձոր» Ե/Կ-ներում PLC ETL 540 տիպի սարքավորումների կապի վերանորոգում:

«Եղեգնաձոր» Ե/Կ-ում ռեպիտորի փոխարինում:

«Գյումրի – 2» Ե/Կ-ում ԲՀ կապի ֆիլտրի փոխարինում «Աշնակ 1» ՕԳ-ի վրա:

«Կամո» Ե/Կ-ում ԲՀ ֆիլտրի փոխարինում «Լիճք» 220 կՎ ՕԳ-ի վրա:

«Սևան» ՀԷԿ – «Հրազդան» ՀԷԿ (OLTE) սարքավորման Ether-100 մոդուլի փոխարինում:

«Գյումրի-2», «Վանաձոր-2» Ե/Կ-ներում (OLTE) սարքավորումների մակարդակների կարգաբերում:

«Շինուհայր» Ե/Կ, «Ագարակ» Ե/Կ PLC ETL540 տիպի սարքավորման կապի վերականգնում:

«Աբովյան» Ե/Կ - «Արգել» ՀԷԿ PLC սարքավորման կապի վերականգնում (սնուցման բլոկի նորոգում):

«Ագարակ» և «Շինուհայր» Ե/Կ-ներում (OLTE) սարքավորման մակարդակների կարգաբերում:

«Հրազդան» ԶԷԿ –ում (OLTE) սարքավորման SFP–ի փոխարինում:

«Քանաքեռ» ՀԷԿ-ում (OLTE) սարքավորման (service) մոդուլի փոխարինում:

«Զովունի» Ե/Կ-ում վերակառուցման կապակցությամբ (OLTE) սարքավորումների տեղափոխում կապի նոր սենյակ:

Կապի հուսալիության բարձրացման նպատակով «Եր.ԶԷԿ», «Արարատ-2», «Եղեգնաձոր», «Շամբ» Ե/Կ-ների SDH օղակում կատարվել է սխեմայի փոփոխություն:

«Արարատ-2» Ե/Կ-ում կապի սարքավորումների տեղափոխում նոր կապի սենյակ:

«Արգել» ՀԷԿ-ում ԱՀԿ-ի կապերի վերականգնում:

«ԲԷՑ» ՓԲԸ-ում OLTE սարքավորման սնուցման աղբյուրի վերականգնում:

Պլանային աշխատանքներ՝ ըստ ժամանակացույցի:

Օպտիկամալուխային ծառայություն

ԱԻՆ – «Զովունի» Ե/Կ կապուղու օպտիկամանրաթելքային մալուխի վնասվածքի վերացում:

«Քանաքեռ» ՀԷԿ – «Քանաքեռ» ՀԷԿ ՕԿԱ կապուղու օպտիկամանրաթելքային մալուխի վնասվածքի վերացում :

«Եր.ՀԷԿ» – Սարյան փողոցի թունելում այրված օպտիկամանրաթելքային մալուխի փոխարինում:

«Եր.ՀԷԿ»-ում հրդեհից վնասված օպտիկամանրաթելքային մալուխների ժամանակավոր անցկացում:

«Եր.ՀԷԿ»-ում հրդեհից վնասված հսկիչ մալուխների փոխարինում:

«FNet» –ին «Շահումյան- 2» Ե/Կ-ից կապուղու տրամադրում, միացումներ:

«Եղեգնաձոր» Ե/Կ-ում օպտիկամանրաթելքային մալուխների չափումներ, վնասված օպտիկամանրաթելքային մալուխի փոխարինում:

«Նորադուռ», «Լիճք», «Վարդենիս» 220 կՎ օդային գծերի օպտիկամանրաթելքային մալուխների թերությունների վերացում:

«Եր.ՀԷԿ»-ում հրդեհից հետո նոր վերանորոգված խրամուղիներով «Կարմիր-1,2» ՕԳ-ի օպտիկամանրաթելքային մալուխի անցկացում և միացումներ, միացման տուփերի տեղադրում:

«Եր.ՀԷԿ»-ի վթարից հետո նոր խրամուղիներով «Եր.ՀԷԿ» – «ԿԿՀ» օպտիկամանրաթելքային մալուխի անցկացում և միացումներ, միացման տուփերի տեղադրում:

«Զովունի» ե/կ -ի վերակառուցման կապակցությամբ «Առինջ-Հրազդան», «Արաբկիր-Գործարանային» և «Մաշտոց-1,2» 110 կՎ ՕԳ-երի օպտիկամանրաթելքային մալուխների տեղափոխում՝ գոյություն ունեցող մալուխային խրամուղիներից նոր կառուցված մալուխային խրամուղիներ, միացման տուփերի մոնտաժում:

«Մարաշ» ե/կ -ից Սcom-ին կապուղու տրամադրում և օպտիկամանրաթելքային մալուխի միացում:

«Շահումյան- 2» ե/կ - ից ԹԻՄ Տելեկոմի օպտիկամանրաթելքային մալուխի միացում:

«Հարավային» ե/կ - Եր.ԶԷԿ - «Հարավային-1,2» ՕԳ-երի դիֆերենցիալ պաշտպանության ստուգում, թերությունների վերացում:

«Սիսիան»ե/կ – Տոլորս ջրամբար օպտիկամանրաթելքային մալուխային գծի շրջայց, միացման տուփերի միացումների բարեկարգում, թերությունների վերացում:

Եր.ՀԷԿ – «Շահումյան-2» ե/կ, «Կարմիր-1,2» ՕԳ-երի ռելեական պաշտպանության կապուղիների ստուգում, թերությունների վերացում:

«Վայք» 220 կՎ ՕԳ-ի №115 հենարանի վրա օպտիկամանրաթելքային մալուխի վնասվածքի վերացում:

«Սպանդարյան» ՀԷԿ, «Շինուհայր» ե/կ, «Որոտան-1» 220 կՎ ՕԳ-ի դիֆերենցիալ պաշտպանության սխեմայի ստուգում, թերության վերացում:

«Շամբ» ՀԷԿ – «Շինուհայր» ե/կ – «Որոտան-2» 220 կՎ ՕԳ-երի դիֆերենցիալ պաշտպանության սխեմայի ստուգում, թերության վերացում:

Եր.ԶԷԿ – «Արարատ-2» ե/կ, «Արարատ-2» 110 կՎ ՕԳ-ի կայծակից վնասված օպտիկամանրաթելքային մալուխի փոխարինում, միացման տուփերի տեղադրում:

«Գուգարք-2» 220 կՎ ՕԳ-ի №49 –ից №50 միջհենարանային հատվածում կրակոցից վնասված օպտիկամանրաթելքային մալուխի փոխարինում, միացման տուփի տեղադրում:

Եր.ԶԷԿ –ում վնասված օպտիկամանրաթելքային մալուխի վնասված հատվածի փոխարինում:

«Արարատ-2» ե/կ – ի օպտիկական մալուխների չափումներ, թերությունների վերացում:

«Եղեգնաձոր» Ե/Կ-ի օպտիկական մալուխների չափումներ, թերությունների վերացում:

«Շինուհայր» Ե/Կ-ի օպտիկական մալուխների չափումներ, թերությունների վերացում:

«Գյումրի» Ե/Կ-ի օպտիկական մալուխների չափումներ, թերությունների վերացում:

Եր.ՋԷԿ-ում կրծողների վնասած կոմուտացիոն օպտիկամանրաթելքային մալուխների փոխարինում:

«Հրազդան» ՀԷԿ-ում կրծողների վնասած օպտիկամանրաթելքային մալուխի փոխարինում:

«Աշնակ» Ե/Կ – «Գյումրի-2» Ե/Կ «Հաշվարկային կենտրոն-ի կապուղու վերականգնում:

«Վանաձոր-2» Ե/Կ -ում օպտիկամանրաթելքային մալուխների չափումներ, ռելեական պաշտպանության կապուղիների միացումներ և ստուգումներ:

«Հրազդան» ՋԷԿ-ում օպտիկամանրաթելքային մալուխների չափումներ, ռելեական պաշտպանության կապուղիների միացումներ և ստուգումներ:

«Հարվային» Ե/Կ – «Հարավային-1,2» ՕԳ-երի դիֆերենցիալ պաշտպանությունների ստուգումներ:

«ԵրՋԷԿ»-ում օպտիկամանրաթելքային մալուխի վնասվածքի վերացում:

«ՄԷԿ» ՓԲԸ – «Քանաքեռ» ՀԷԿ օպտիկամանրաթելքային մալուխի տեղափոխում նոր տեղադրված հենարանների վրա, միացման տուփերի տեղադրում:

«Ռետն.ամ» կազմակերպության ցանցի կառուցում ԿԿՀ-ից «Եր.ՋԷԿ» – «Մարաշ» Ե/Կ – «Քանաքեռ» ՀԷԿ – «Զովունի» Ե/Կ – «Արգել» ՀԷԿ – «Հրազդան» ՀԷԿ – «Հրազդան» ՋԷԿ – «Վանաձոր» Ե/Կ:

«Ռետն.ամ» կազմակերպությանը «ԿԿՀ» - «Երևան» ՀԷԿ – «Շահումյան» Ե/Կ – «ՀԱԷԿ» ՓԲԸ – «Աշնակ» Ե/Կ կապուղու տրամադրում, միացումներ:

«Եղեգնաձոր» Ե/Կ-ից «Ֆնետ» –ին կապուղու տրամադրում, միացումներ :

«Արգել» ՀԷԿ-ում «Ֆնետ» – ին կապուղու տրամադրում, միացումներ:

«Աշնակ» Ե/Կ-ում Թիմ Տելեկոմին կապուղու տրամադրում, միացումներ:

«Շինուհայր» Ե/Կ-ի 110 կՎ պորտալից մինչև №4 հենարան, «Գորիս» 110 կՎ ՕԳ-ի օպտիկամանրաթելքային մալուխի ապամոնտաժում և նոր ուղեծրով մոնտաժում, միացման տուփերի տեղադրում:

«Անուշ-Աշտարակ» 110 կՎ ՕԳ-ի №75 հենարանի միացման տուփից, «Թիմ Տելեկոմ»-ին կապուղու տրամադրում:

Պլանային աշխատանքներ ըստ ժամանակացույցի:

Ռադիո ծառայություն

«Շինուհայր» ե/կ-ի, «Ագարակ» ե/կ-ի ԲԲՍ-ների հեռախոսների մոնտաժ և կարգավորում:

ԱԻՆ-ի շենքում ՌԴԼ-ին կայանի (малютка) և ալեհավաքի նորոգում և կարգավորում:

«Եր.ՀԷԿ»-ի մեքենայական սրահում UTP մալուխի մոնտաժ և ԲԲՍ-ի հեռախոսի նորոգում:

«ՀԱԷԿ» ՓԲԸ - «Սևջուր» ե/կ-ում ՌԴԼ-ին կայանի (малютка) և ալեհավաքի նորոգում:

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ում ՌԴԼ-ին կայանի նորոգում և կարգավորում:

ԱԻՆ-ում (iP) հեռախոսի նորոգում և ցանցային կոմուտատորի կարգավորում:

«Արարատ – 2» ե/կ-ի ԲԲՍ 220 կՎ-ում և ԲԲՍ 110 կՎ-ում անալոգային հեռախոսների և UTP մալուխի մոնտաժ:

«Շահումյան – 2» ե/կ-ի ԲԲՍ 220 կՎ-ում և ԲԲՍ 110 կՎ –ում UTP մալուխի փոխարինում և անալոգային հեռախոսի նորոգում:

«Հաղթանակ» ե/կ-ի ԲԲՍ-ում անալոգային հեռախոսի նորոգում:

«ՀԷՑ» ՓԲԸ, «Արաքս» մ/ճ-ի, «Հովտաշատ» ե/կ-ում, «Մասիս» 110 կՎ ե/կ-ում և

«Մխչյան – 1» ե/կ-ում (FM301-160) ռադիո կայանների նորոգում և կարգավորում:

«Զովունի» 220 կՎ ե/կ-ում օպտիկական մալուխի մոնտաժ, «air Fiber» ռադիոկայանի և ալեհավաքի մոնտաժ և կարգավորում, UTP մալուխի մոնտաժ:

«Զովունի» ե/կ-ի ԲԲՍ 110 կՎ –ում UTP մալուխի և անալոգային հեռախոսի մոնտաժ և կարգավորում:

«Երևան» ՀԷԿ-ի ամբարտակում «air Fiber» ռադիոկայանի նորոգում:

«Եղեգնաձոր» ե/կ-ի ԲԲՍ 220 կՎ-ում հեռախոսի նորոգում և մալուխի ստուգում:

«Արգել» ՀԷԿ-ում (iP) հեռախոսի նորոգում և ԲԲՍ-ում անալոգային հեռախոսի նորոգում:

ՊԿԿ-ում հակահրդեհային սարքի նորոգում և ստուգում:

«Մարաշ» ե/կ-ի ԲԲՍ 110 կՎ –ում անալոգային հեռախոսի նորոգում և ստուգում:

«ԲԷՑ» ՓԲԸ վարչական շենքում (iP) հեռախոսի տեղադրում և կարգավորում:

Պլանային աշխատանքներ ըստ ժամանակացույցի:

Էլեկտրասնուցման ծառայություն

«Ագարակ» ե/կ-ում փոխակերպիչի տեղադրում և սնուցման միացում:

«Շինուհայր» ե/կ-ում լիցքավորման ագրեգատի պահուստային փոխակերպիչի տեղադրում և միացում:

«Տաթև» ՀԷԿ-ում պահուստային փոխակերպիչի միացում:

«Սպանդարյան» և «Շամբ» ՀԷԿ-ում փոխակերպիչների տեղադրում և միացում:

«Եղեգնաձոր» ե/կ-ում փոխակերպիչի տեղադրում և միացում:

«Եր.ՀԷԿ»-ում հրդեհից հետո վնասվածքների վերացում:

«Գյումուշ» և «Քանաքեռ» ՀԷԿ-ում կարգավարական հեռախոսի միացում (նոր սխեմայով հաստատուն 220Վ)

«Արարատ-2» ե/կ-ում SCADA –ի սարքերի 48 Վ միացում:

«Արարատ-2» ե/կ-ում լիցքավորման ագրեգատի տեղադրում և մոնտաժում:

«Եր.ՀԷԿ»-ում SCADA կապ համակարգի հաստատուն 220 Վ-ի սարքերի միացում:

«Արզնի» ՀԷԿ-ում կարգավարական հեռախոսի միացում 220 Վ անխափան սնուցման սարքից:

«Զովունի» ե/կ-ում SCADA սարքերի 48Վ միացում:

«Զովունի» ե/կ-ում լիցքավորման ագրեգատի մոնտաժում և միացում:

«Քանաքեռ» ՀԷԿ ՕԿԱ-ի անխափան սնուցման սարքի (UPS)-ի նորոգում:

«Մարաշ» ե/կ-ի 48Վ մարտկոցների լիցքավորիչի նորոգում:

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 48/220 փոխակերպիչի նորոգում:

«Արզնի» ՀԷԿ-ի UPS-ի նորոգում:

«Վանաձոր -2» ե/կ PLC սարքավորման 48/5 Վ փոխակերպիչի նորոգում:

«Հրազդան» ՀԷԿ-ում SCADA/ կապ սարքավորումների հաստատուն 220 Վ-ից անխափան սնուցման ապահովում:

«Սպանդարյան» ՀԷԿ 48Վ մարտկոցների լիցքավորիչի վերանորոգում:

Բոլոր ե/կ-ներում SCADA /կապ համակարգի արկղերի սեյսմիկ ամրացում:

«Եղեգնաձոր» ե/կ-ում կոնվերտորի պահուստային սարքի մոնտաժում:

«Զովունի» ե/կ-ի շարժիչ-գեներատորի նորոգում:

«Էներգակապ» մ/ճ-ի ավտոմատ փոխանջատման (ABP) պատրաստում և մոնտաժում:

«Զովունի» ե/կում SCADA կապի սարքերի փոփոխական 220 Վ լարման միացում:

«Շինուհայր» ե/կում PLC սարքավորման 48 Վ միացում:

«Հրազդան» ԶԷԿ-ում OLTE սարքավորման սնուցման աղբյուրի նորոգում մակարդակների կարգաբերում:

Պլանային աշխատանքներ ըստ ժամանակացույցի:

Ավտոտրանսպորտի և մեխանիզացիայի ծառայություն

2024թ. ապահովվել է մեքենաների տեխնիկական սպասարկումն ու վերանորոգումը, պահպանվել է մեքենաների սարքին վիճակը և անխափան շահագործումը:

Կատարվել են նաև սեզոնային և ձմեռային նախապատրաստական աշխատանքներ:

Մասնաճյուղի տեղամասերը՝ «Արևելյան», «Հյուսիսային», «Արևմտյան», «Զանգեզուրի» պարտաճանաչորեն կատարել են վթարավերականգնողական, պրոֆիլակտիկ աշխատանքները և ակտիվ մասնակցել են մասնաճյուղի ծառայությունների կողմից կատարվող աշխատանքներին:

III. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆ

1. Եկամուտներ և ծախսեր (առանց ԱԱՀ)

1.1. Եկամուտներ (առանց ԱԱՀ)

Ընկերության տարեկան եկամուտը կազմել է 2947.9 մլն դրամ (հավելված 1):

Տարեկան գործառնական եկամուտները կազմել են 2418.5 մլն դրամ, խորհրդի կողմից հաստատված նախահաշվով նախատեսված 2398.3 մլն դրամ գումարի դիմաց (նախատեսվածից ավել եկամուտը կազմել է 20.2 մլն դրամ): Հիմնական գործունեությունից ստացված եկամուտը կազմել է 2136.7 մլն դրամ, խորհրդի կողմից հաստատված նախահաշվով նախատեսված 2091.2 մլն դրամ գումարի դիմաց, որը հաշվարկված է ելնելով Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2024-2025թ.թ. ծառայության մատուցման սակագնի հաշվարկից, (նախատեսվածից ավել եկամուտը կազմել է 45.5 մլն դրամ), որը արդյունք է ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի կողմից տարեկան էլեկտրաէներգիայի հաշվեկշռում նախատեսված էլեկտրաէներգիայի քանակի պակաս պլանավորման: Նշված եկամուտի գոյացման աղբյուրները հետևյալն են. 1754.35 մլն դրամը՝ ՀՀ տարածքում մատուցած ծառայությունների դիմաց (վճարող՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ՝ 1252.65 մլն դրամ և շուկայի մասնակից որակավորված սպառողներ՝ 501.7 մլն դրամ), «ԵրՋԷԿ» ՓԲԸ-ի կողմից Իրանից ներկրված գազի դիմաց էլեկտրաէներգիայի արտահանման ընթացքում Ընկերության մատուցած ծառայության համար, ինչպես նաև Վրաստան արտահանման ընթացքում ստացված եկամուտների հանրագումարը կազմել է 382.3 մլն դրամ:

Այլ գործունեությունից ստացված լրացուցիչ եկամուտը կազմել է 281.85 մլն դրամ, խորհրդի կողմից հաստատված նախահաշվով նախատեսված 307.12 մլն դրամ գումարի դիմաց (նախատեսվածից պակաս եկամուտը կազմել է 25.27 մլն դրամ):

Նշված եկամուտի գոյացման աղբյուրները հետևյալն են. Աբովյան 27 շենքի տարածքի վարձակալությունից՝ 43.1 մլն դրամ, օպտիկամալուխային գծերի վարձակալությունից՝ 182.7 մլն դրամ, փոքր ՀԷԿ-երի և արևային կայանների համար ՌՊԱ հաշվարկների կատարումից՝ 3.6 մլն դրամ: «ԷԷՀՕ» ՓԲ Ընկերության էլեկտրատեղակայանքներով այլ սպառողներին (ենթասպառողներին) «ՀԷՑ» ՓԲ

ընկերության կողմից էլեկտրաէներգիա հաղորդելու համար փոխհատուցումից ստացված եկամուտը կազմել է 0.57մլն դրամ, «ԲԷՏ» ՓԲ ընկերությանը մատուցած լրացուցիչ ծառայությունների և տեխ.պայմանների տրամադրման համար՝ 2.08մլն դրամ, «ՀԷՏ» ՓԲ ընկերությանը պատկանող ենթակայաններում իրականացված լարման միացությունների ռելեական պաշտպանության և դրվածքների վերահաշվարկներից՝ 0.24մլն դրամ, «Կասկադ Էներգո» ՍՊ ընկերության հետ կնքված պայմանագրի համաձայն նոր ԱԷԿ-ի հզորության որոշման նպատակով ՀՀ էներգահամակարգի զարգացման հետազոտության հաշվարկների ծառայությունների մատուցումից ստացված եկամուտը կազմել է 12.0մլն դրամ, «Ագարակի պղնձ-մոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության հետ կնքված պայմանագրի համաձայն լարման ԵԿ-ի միացությունների ՌՊԱ դրվածքների հաշվարկի համար՝ 1.46մլն դրամ: Բանկում ներդրված ավանդի տոկոսից ստացված եկամուտը կազմել է 36.1մլն դրամ: Այլ գործունեությունից ստացված եկամուտները նախահաշվով նախատեսվածից պակաս է կազմել Ընկերության գործընկերների կողմից պայմանագրային պարտավորությունների չկատարման արդյունքում:

Ընկերության գործառնական եկամուտները կազմել են 2418.5մլն դրամ:

Տարեկան ոչ գործառնական եկամուտները կազմել են 529.4մլն դրամ, նշված եկամուտի գոյացման աղբյուրները հետևյալն են՝ տույժերից, տուգանքներից և ԱՊՊԱ-ից ստացված եկամուտը կազմել է 0.18մլն դրամ, փոխարժեքային տարբերությունից եկամուտ՝ 529.2մլն դրամ, շնորհների ձևակերպումների արդյունքում ստացվել է 0.021մլն դրամ եկամուտ:

Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին համապատասխան հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական հաշվետվությունների կազմման նպատակով, որպես եկամուտ հաշվարկվում է գործառնական (2418.5մլն դրամ) և ոչ գործառնական (529.4մլն դրամ) եկամուտների հանրագումարը՝ **2947.9մլն դրամ:**

1.2.Ծախսեր (առանց ԱԱՀ)

1.2.1.Ընկերության տարեկան գործառնական ծախսերը կազմել են **2424.7մլն դրամ** (հավելված 2), ըստ ծախսային հոդվածների պատկերը հետևյալն է՝

Նյութական ծախսեր - կազմել են 67.9մլն դրամ (նախահաշվով նախատեսված 67.7մլն դրամ գումարի դիմաց), վառելիքի ծախսը կազմել է 21.24մլն դրամ (նախահաշվով նախատեսված 28.26մլն դրամ գումարի դիմաց), էլեկտրաէներգիայի ծախսը կազմել է 28.47մլն դրամ (նախահաշվով նախատեսված 27.37մլն դրամ գումարի դիմաց), տարբեր պահեստամասերի և սարքավորումների, դիսպետչերական վահանակի պահեստամասերի և այլ նյութական ծախսերը կազմել են 18.2մլն դրամ (նախահաշվով նախատեսված 12.02մլն դրամ գումարի դիմաց), ծախսերը ավելի են ստացվել, քանի որ Կենտրոնական կարգավարական ծառայության և Պահուստային կարգավարական կետի SIEMENS/SCADA համակարգի անխափան շահագործումն ապահովելու համար անհրաժեշտություն է առաջացել լրացուցիչ ձեռք բերել սարքվածքներ՝ կոշտ սկավառակ և արխիվացման սերվերի համար օպտիկական պորտեր և այլ պահեստամասեր, որոնց մեծ մասը ձեռք են բերվել նախորդ տարիներին և գտնվում էին պահեստում.

մաշվածություն - հաշվարկվել է 873.21մլն դրամ (նախահաշվում նախատեսված 53.37մլն դրամ գումարի դիմաց), քանի որ Ասիական Զարգացման Բանկի կողմից տրամադրված վարկային միջոցների հաշվին ձեռք բերված կազմ.տեխնիկայի, համակարգչային ծրագրի և SCADA ծրագրով նախատեսված հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների գումարը ներառված չէ ինչպես ՀԾԿ հանձնաժողովի կողմից հաստատված ամսական ծառայության վճարի հաշվարկում, այնպես էլ Ընկերության տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշվում, որի արդյունքում ամորտիզացիոն ծախսերը, որոնք հաշվարկվել են նաև հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին համապատասխան նախահաշվից ավելի է հաշվարկվել 819.84մլն դրամով.

վերանորոգման ծախսեր – կազմել են 69.75մլն դրամ (նախահաշվով նախատեսված 69.66մլն դրամ գումարի դիմաց).

սպասարկման ծախսեր - կազմել են 209.7մլն դրամ (նախահաշվով նախատեսված 231.94մլն դրամ գումարի դիմաց).

աշխատավարձ - հաշվարկվել է 874.1մլն դրամ (նախահաշվով նախատեսված 987.0մլն դրամ գումարի դիմաց)。

այլ ծախսեր - կազմել են 83.4մլն դրամ (նախահաշվով նախատեսված 88.3մլն դրամ գումարի դիմաց), որում ընդգրկվել են հեռախոսային և ինտերնետային կապի ծախսերը 10.82մլն դրամ (նախահաշվով նախատեսված էր 9.07մլն դրամ): Հեռախոսային և ինտերնետային կապի ծախսերը նախահաշվով նախատեսվածից շատ է ստացվել, քանի որ լրացուցիչ համարներ են տրամադրվել արևային կայաններից ինֆորմացիայի հաղորդման համար: Գործուղման ծախսերը կազմել են 4.18մլն դրամ (նախահաշվով նախատեսված էր 15.39մլն դրամ), գործուղման ծախսերը ավելի քիչ են կազմել նախահաշվով նախատեսվածից, քանի որ միայն Հայաստանի տարածքում կատարված գործուղումների ծախսերն են վճարվել Ընկերության միջոցներից, իսկ արտերկրի կատարած գործուղումների համար ծախսերը վճարվել են հրավիրող կողմի միջոցների հաշվին: Կարգավորման պարտադիր վճարը և չփոխհատուցվող հարկերը 7.0մլն դրամ (նախահաշվով նախատեսված էր 5.9մլն դրամ): Աուդիտորական և խորհրդատվական ծառայությունները 1.82մլն դրամ (նախահաշվով նախատեսված էր 1.74մլն դրամ), վարձակալական վճարը 17.1մլն դրամ (նախահաշվով նախատեսված էր 17.1մլն դրամ), պահպանության հետ կապված ծախսերը 15.1մլն դրամ (նախահաշվով նախատեսված էր 15.1մլն դրամ), անձնակազմի վերապատրաստման ծախսեր 0.59մլն դրամ (նախահաշվով նախատեսված էր 0.83մլն դրամ), ապահովագրության ծախսերը կազմել են 9.06մլն դրամ (նախահաշվով նախատեսված էր 8.09մլն դրամ): Ներկայացուցչական ծախսերը կազմել են 1.9մլն դրամ (նախահաշվով նախատեսված էր 1.9մլն դրամ), կոմունալ տնտեսության ծախսերը կազմել են 1.28մլն դրամ (նախահաշվով նախատեսված էր 0.7մլն դրամ), տնտեսական ծախսերը կազմել են 6.7մլն դրամ (նախահաշվով նախատեսված էր 6.7մլն դրամ), գրասենյակային ապրանքների ձեռք բերման ծախսերը կազմել են 2.8մլն դրամ (նախահաշվով նախատեսված էր 2.7մլն դրամ), բաժանորդագրության ծախսերը կազմել են 0.2մլն դրամ (նախահաշվով նախատեսված էր 0.2մլն դրամ), հաշվարկային ծրագրի սպասարկման ծախսերը կազմել են 0.56մլն դրամ (նախահաշվով նախատեսված էր 0.61մլն դրամ), բանկի սպասարկման ծախսերը կազմել են 0.13մլն դրամ (նախահաշվով նախատեսված էր 0.1մլն դրամ) և այլ

չնախատեսված ծառայությունների և ապրանքների ձեռք բերման հետ կապված ծախսերը կազմել են 4.15մլն դրամ (նախահաշվով նախատեսված էր 2.21մլն դրամ):

լիցենզիոն փարեկան փուրք - կազմել է 5.0մլն դրամ:

Էլեկտրաէներգետիկական համակարգում անցումային ռեժիմների մոնիթորինգի համակարգի (WAMS) ներդրման աշխատանքների և ՀՀ Էներգահամակարգի զարգացման երկարաժամկետ ծրագրի մշակման և գերբարձր լարման ցանցի շահագործման հետ կապված միջոցառումների մշակման համար նախահաշվով նախատեսվել է 152.3մլն դրամ, (որը հաշվարկված է ելնելով Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2024-2025թ.թ. ծառայության մատուցման սակագնի հաշվարկից):

Էլեկտրաէներգետիկական համակարգում անցումային ռեժիմների մոնիթորինգի համակարգի (WAMS) ներդրման աշխատանքները, որոնք դեռևս ավարտված չեն, ծախսագրվում են որպես ամորտիզացիոն մասհանումներ:

ՀՀ Էներգահամակարգի զարգացման երկարաժամկետ ծրագրի մշակման և գերբարձր լարման ցանցի շահագործման հետ կապված միջոցառումների մշակման համար կատարված ծախսերը կազմել են 70.4մլն դրամ:

Կանոնադրական կապիտալի ավելացման հետ կապված կորպորատիվ գործողություն - Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 34-րդ, 35-րդ և 67-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2024 թվականի հունվարի 4-ի N 8-Ա որոշումը, Ընկերության 05.02.2024թ. արտահերթ ընդհանուր ժողովի որոշման հիման վրա՝ Ընկերության Կանոնադրական կապիտալը ավելացվել տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքների մեծացման միջոցով և կազմում է 3450241482.4647 դրամ:

«Արմբրոկ» ԲԲԸ-ն իրականացրել է կանոնադրական կապիտալի ավելացման հետ կապված կորպորատիվ գործողությունները, որի համար վճարվել է 5.5մլն դրամ (նախահաշվով նախատեսված 5.5մլն դրամ գումարի դիմաց):

վարկի սպասարկման ծախսեր - կազմել են 165.79մլն դրամ (նախահաշվով նախատեսված 711.41մլն դրամ գումարի դիմաց):

«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի և Ֆինանսների ու Էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունների միջև համապատասխանաբար 2007 և 2015թթ. կնքվել են արտոնյալ պայմաններով

վարկային պայմանագրեր՝ Ճապոնական Բանկի և Ասիական Զարգացման Բանկի կողմից տրամադրված ֆինանսական միջոցների հաշվին: ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի համապատասխան որոշումներով տրամադրված վարկերի և դրանց տոկոսների մարման համար անհրաժեշտ գումարները ներառվել են Ընկերության տարեկան սակագնի հաշվարկներում՝ համաձայն պայմանագրերով նախատեսված ժամանակացույցի և տոկոսների (մարումները իրականացվում են տարեկան 4 անգամ՝ օրվա գործող ճապոնական իենի, XDR-ի փոխարժեքներին համապատասխան):

Ինչպես ՀԾԿ հանձնաժողովի կողմից Ընկերության ծառայությունների մատուցման սակագնի հաշվարկում, այնպես էլ տարեկան ծախսերի և եկամուտների նախահաշվում ներառված են Ճապոնական և Ասիական Զարգացման Բանկերի կողմից տրամադրված վարկերի հիմնական գումարների և դրանց տոկոսագումարների մարման համար անհրաժեշտ գումարները՝ 711.4մլն դրամ, սակայն ըստ ծախսերի հաշվարկման մեթոդիկայի փաստացի ծախս է ճանաչվել միայն վարկի տոկոսային վճարների գումարը՝ 165.79մլն դրամը, քանի որ վարկերի մայր գումարները համարվում են որպես վարկի վերադարձ, որոնք արդեն իսկ ներառված են հիմնական միջոցների մեջ և արտացոլվում են ամորտիզացիոն մասհանումների տեսքով, ուստի չեն համարվում ընթացիկ ծախսեր: (31.12.2024թ. դրությամբ «ԷԷՀՕ» ՓԲԸ վարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքը կցվում է):

Ոչ գործառնական ծախսեր – 299.2մլն դրամ, այդ թվում

արտարժույթի փոխարժեքային տարբերությունից ծախսեր - կազմել են 198.22մլն դրամ.

Վարկի տոկոսագումարների զեղչված գումար (դիսկոնտ) - կազմել են 80.3մլն դրամ.

արձակուրդի պահուստ և այլ ծախսեր - կազմել են 16.05մլն դրամ

Տույժ, տուգանք և այլ ծախսեր - կազմել են 4.55մլն դրամ.

Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին համապատասխան հաշվապահական հաշվեկշռի կազմման նպատակով որպես ծախս հաշվարկվել է գործառնական (2424.7մլն դրամ) և ոչ գործառնական (299.2մլն դրամ) ծախսերի հանրագումարը՝ **2723.9մլն դրամ**:

Ընկերության 2024թ. ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ձևավորվել է շահույթ **224.0մլն դրամ**՝ (գործառնական ու ոչ գործառնական եկամուտների և գործառնական ու ոչ գործառնական ծախսերի տարբերությունը) (2947.9 – 2723.9):


Ընկերության շահութաբաժնի վճարման քաղաքականությունը իրականացվում է ՀՀ կառավարության 2023թ. հոկտեմբերի 12-ի N1748-Ն որոշմամբ սահմանված կարգով, համաձայն որի Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից սակագնային կարգավորման ենթակա առևտրային կազմակերպությունների համար կարգավորվող գործունեության մասով հաշվետու տարվա զուտ շահույթի մեծություն է ընդունվում հաշվետու տարվա համար յուրաքանչյուր առևտրային կազմակերպության գործունեության արդյունքում պլանավորված և ՀԾԿ հանձնաժողովի կողմից հաստատված սակագնի հաշվարկում ներառված՝ տարեկան շահույթի մեծությունը, որը 2024թ. կազմել է 26.19մլն դրամ: ՀՀ ֆինանսների նախարարի 2024թ.-ի փետրվարի 27-ի N47-Լ հրամանով հաստատված «50 տոկոսից ավել պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերությունների և Հայաստանի Հանրապետության Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից սակագնային կարգավորման ենթակա ընկերությունների շահութաբաժնի հաշվարկման հաշվարկ»-ի համաձայն, (հաշվարկը կցվում է) շահութաբաժնի հաշվարկման բազան՝ հաշվի առած ավելացումները (ՀՀ ֆինանսների նախարարի 27.02.2024թ. N47-Լ հրամանով հաստատված շահութաբաժնի հաշվարկի 070 տող), կազմել է 35269.0 հազ.դրամ:

Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցման ենթակա շահութաբաժնի գումարը կազմում է շահութաբաժնի հաշվարկման բազայի 50%-ը՝ 17634.5հազ.դրամ (ՀՀ ֆինանսների նախարարի 27.02.2024թ. N47-Լ հրամանով հաստատված շահութաբաժնի հաշվարկի 0100 տող):

Ընդհանուր ուղղակի (գործառնական) ծախսերի մեջ առանձին ծախսային հոդվածների համամասնությունը տոկոսային արտահայտությամբ կազմում է՝

Ծախսեր	մլն դրամ	%
Հաշվարկներ աշխատակազմի հետ	874.1	36.1
Նյութական ծախսեր	67.9	2.8
Մաշվածություն	873.21	36.0
Վերանորոգման ծախսեր	69.75	2.9
Սպասարկման ծախսեր	209.7	8.7
Երկարաժամկետ ծրագրի մշակում, գերբարձր լարման ցանցի միջոցառումների մշակում	70.4	2.9
Վարկի սպասարկում	165.8	6.8
Այլ ծախսեր	93.9	3.8
ԸՆԴԱՄԵՆԸ	2424.7	100

ԾԱԽՍԵՐ



2.ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ (ԱԱՀ-ՈՎ) (հավելված 3)

2024թ. հունվարի 1-ի դրությամբ ընկերության դրամական միջոցների մնացորդը կազմել է **439.6մլն դրամ**: 2024թ. ընթացքում մուտք է եղել **2818.6մլն դրամ**, այդ թվում ներքին շուկայում մատուցած ծառայության դիմաց («ՀԷՑ» ՓԲԸ և շուկայի մասնակից որակավորված սպառողներ) 2047.0մլն դրամ, արտահանման ընթացքում մատուցած ծառայությունների դիմաց («ԵրՋԷԿ» ՓԲԸ) 442. 5մլն դրամ և 329.1մլն դրամ այլ ծառայությունների դիմաց:

Ծախսվել է տարվա ընթացքում **2811.6մլն դրամ**, այդ թվում՝

- | | |
|--|-------------------|
| - աշխատավարձ | - 673.19 մլն դրամ |
| - եկամտային հարկ | - 159.3 մլն դրամ |
| - ԱԱՀ | - 309.64 մլն դրամ |
| - անշարժ գույքի և փոխադրամիջոցների հարկ, լիցենզիոն տուրք, ՀԾԿՀ անդամավճար | - 11.1 մլն դրամ |
| - սոց վճար և դրոշմանիշային վճար | - 32.6 մլն դրամ |
| - շահութահարկ և շահութահարկի կանխավճար | - 9.0 մլն դրամ |
| - շահութաբաժին | - 32.3մլն դրամ |
| - պակաս վճարված շահութաբաժնի տույժ | - 3.0 մլն դրամ |
| - կապի ծառայություններ | - 12.9 մլն դրամ |
| - նյութական ծախսեր | - 67.2 մլն դրամ |
| - վերանորոգման ծախսեր | - 67.8 մլն դրամ |
| - մարվել է՝ վարկ և վարկի % | - 691.98 մլն դրամ |
| - գործուղման ծախսեր | - 4.3 մլն դրամ |
| - սպասարկման ծախսեր (<i>տեսապատ, սերվերներ և Spektrum Power 7 համակարգի տեխնիկական սպասարկում</i>) | - 232.6 մլն դրամ |
| - վարձակալական վճար
(«Մեդրո», «ԲԷՑ», «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ և «Յուքոմ» ՍՊԸ) | - 22.4 մլն դրամ |
| - գրասենյակային պիտույքներ, գույք, համակարգչային տեխնիկա և տնտեսական ապրանքներ և այլն | - 14.8 մլն դրամ |
| - առդիտորական և խորհրդատվական ծառայություններ | - 0.99 մլն դրամ |
| - խորհրդատվական ծառայությունների մատուցում | - 0.99 մլն դրամ |
| - պահպանության հետ կապված ծախսեր | - 13.8մլն դրամ |
| - եղանակային տպիչ Lufft, WS700-UMB Smart Weather Sensor | - 5.5 մլն դրամ |
| - Կենտրոնական կարգավարական ծառայության պահուստային կարգավարական կետի SIEMENS/SCADA համակարգի անխափան շահագործումն ապահովելու համար անհրաժեշտ սարքերի ու սարքավորումների ձեռք բերում, | - 2.1 մլն դրամ |
| - Էլեկտրաէներգետիկական համակարգում անցումային ռեժիմների մոնիթորինգի համակարգի (WAMS) ներդրման աշխատանքներ | - 346.66 մլն դրամ |
| - ՀՀ էներգահամակարգի հաղորդման ցանցի 2025-2034թ.թ. զարգացման ծրագրի մշակման համար հաղորդման ցանցի մոդելավորման, ստատիկ և դինամիկ կայունության, կարճ միացման հաշվարկների կատարման աշխատանքներ | - 38.7մլն դրամ |
| - հակավթարային ավտոմատիկայի և ՌՊԱ ներկայացվող պահանջների մշակման աշխատանքներ | - 34.1 մլն դրամ |
| - դրամական օգնություն աշխատողներին | - 7.7 մլն դրամ |
| - այլ ծախսեր | - 16.9 մլն դրամ |

Դրամական միջոցների մնացորդը 2025թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է

446.6մլն դրամ:

3. ԴԵՔԻՏՈՐՆԵՐ ԵՎ ԿՐԵԴԻՏՈՐՆԵՐ

3.1 Դեքիտորական պարտքերը 2025թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել են 287203.4 հազ.դրամ, 2024թ. հունվարի 1-ի դրությամբ դեքիտորական պարտքի մնացորդը կազմել է 197236.0 հազ.դրամ (տեղեկանքը կցվում է):

3.2 Կրեդիտորական պարտքերը 2025թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել են 89517.4 հազ.դրամ, 2023թ. հունվարի 1-ի դրությամբ կրեդիտորական պարտքի մնացորդը կազմել է 40824.0 հազ.դրամ (տեղեկանքը կցվում է):

Ժամկետանց դեքիտորական և կրեդիտորական պարտքեր Ընկերությունը 2025թ. հունվարի 1-ի դրությամբ չունի:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ
2024թ. դեբիտորական պարտքերի վերաբերյալ

(հունվար-դեկտեմբեր)

(հազ. դրամ)

	Կազմակերպության անվանումը	Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում 31.12.2024թ.
1	«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ	168 158.1
2	«Վեոլիա ջուր» ՓԲԸ	632.7
3	«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ	3 020.5
4	«Երևանի ԶԷԿ» ՓԲԸ	34 548.9
5	«Էներջի Սփիլայ» ՍՊԸ	22 374.7
6	«Էներլեքս» ՓԲԸ	3 391.3
7	«Գպմ Գոլդ» ՍՊԸ	1 723.1
